ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 488-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ի 2020 թվականի N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 488-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 29-ի «Աուտիզմի ազգային հիմնադրամ» հիմնելու մասին» N 488-Ն որոշման հավելվածի 27-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«27. Խորհուրդը բաղկացած է 18 անդամից: Խորհրդի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ներկայացմամբ՝

1) մեկին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի տիկնոջ գրասենյակից.

2) երեքին՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից.

3) մեկին՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից.

4) մեկին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական

հարցերի նախարարությունից.

5) մեկին՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմից (համաձայնությամբ).

6) երկուսին՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունից (համաձայնությամբ).

7) երկուսին՝ «Առաջինը երեխաներին» հասարակական կազմակերպությունից (համաձայնությամբ).

8) չորսին՝ «Աուտիզմ հաղթահարում» հասարակական կազմակերպությունից (համաձայնությամբ).

9) մեկին՝ «ՎիվաՍել-ՄՏՍ» փակ բաժնետիրական ընկերությունից (համաձայնությամբ).

10) մեկին՝ «Գրանդ Հոլդինգ» իրավաբանական անձանց միությունից (համաձայնությամբ).

11) մեկին՝ «ԱՐԲԵՍ» առողջության կենտրոնից (համաձայնությամբ)։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից